Թարգմանութիւն անգլիարէն տապանագրին է այսպէս։

Աստ ամփոփեալ կայ մարմին Ծատուր[1] Ազարմալի, որդւոյ Ազարմալի յազգէն Հայոց, ծնեալ ի Ջուղա գաւառին, ի Պարսկաստան, կրօնիւ կաթուղիկէ, ի հասակի 45 ամաց, որ զրաւեցաւ ի կենաց յ'13 Մայիսին 1746։

6. Hic jacet corpus Ignacii Isaac de Sauquic Armenus natione naturalis ex Persia oriundus ex Civitate Julfa diem supremum obiit die trigesima mensis Maij. Anno Domini 1746.

Այս է տապան Զակիկենց Սահակի որդի Մինասին։ Թիվն Փրկչին 1746, Թիվն փոքր 131· Ադամ երեսուն։

7. In isto tumulo jacet corpus defuncti Zacaria Xerimani natione Armeni (mercator) diem supremum obiit Colicatae die 26 Novembris. Anno 1754.

Զկայ Հայ տապանագիր, իսկ թարգմանութիւն լատիներէն հակիրճ տապանագրին է այսպէս։

Ի տապանի աստ հանգչի մարմին հանգուցեալ Զաքարիա[2] Շահրիմանի, ազգաւ Հայ (վաճառականին) որ հանգեաւ ի Կալկաթա ի 26 Նոյեմբերի, յամին 1754։

8. In isto tumulo jacet corpus defuncti Philipi Xerimani natione Armeni (mercator) diem supremum obiit Colicotae die 27 Octobris. Anno 1755.

Ներքոյ տապանիս է հանգուցեալ ջուղայեցի Շերիմանենց Շերիմանի որդի Փիլիպպոսին, ազգաւ հայ վաճառական, վաղճանեալ ի Կալկաթայ Թիվն Փրկչին 1755, Թիվն փոքր ԱՃԽ· Թիրայ Լ։

9. Hic jacet Joseph Bacarum Xerimani natione Armenius obiit die XI Junii. Anno Domini MDCCLXIII.

Ի տապանի աստ ամփոփի,
մարմին ումեմն բարեպաշտի,
անուն սորա Յովսէփ կոչի
որդի գոլով Բարաղամի,
ազնիւ ազգէն Շէրիմանեցի,
ի Ըսպահանու ջուղայեցի,
որ փոխեցաւ ի կենաց աստի,
Թիվն 1763, Յունիսի 11։

10. Hic jacet Zacharias Xerimani natione Armenius, obiit die vigesima septima Novembris. A Domini MDCCLXIV.

Ի տապանի աստ ամփոփի
մարմին ումեմն բարեպաշտի
անուն սորա Զաքարիա կոչի
որդի գոլով Բարաղամի
ազնիւ ցեղէն Շէրիմանեցի
ի Ըսպահանու ջուղայեցի
որ փոխեցաւ ի կենացս աստի
Թիվն 1764, Նուեմբերի 27ումն։

Շիրիմ սորա փառաւոր անկանի ընդ աջմէ շիրմի Եղբօրն Յովսեփայ, (թիւ 9)։ Երկոքին շիրիմքն են յար և նման միմեանց, թէ ըստ չափու քարանցն և թէ ըստ ձեւոյ քանդակացն և զարդուցն որք տեսանին ի գլուխ արձանագրութեանցն, գեղեցկապէս փորագրեալ։

11. Մարմին Պարոն Գաբրիէլի,
Բարեծնունդ Յովհաննէսի,
դնի յայսմ նեամ շիրմի,
հոգին պայծառ յերկինս փայլի,
էր երկիւղած բարի արդար,
անմեղ վարուքն անվթար,
հեզ եւ ժուժկալ գերակատար,
արքայութեան վարձուն սատար,
տիօք վաթսուն եւ ութն ամաց,
զընթացս կենաց կատարեաց,
փոքր թուին Հայաստանեայց[3]·
հարիւր վաթսուն վեց զուգընթաց
վեցտասանն Ադամ ենչեաց։

---

1. *Ըստ ամենայն հաւանականութեան, որդի էր սա Աղայ Հազարմալի, ի Ջախթունեանց ազնիւ տոհմէն Նոր-Ջուղայի, որ կառոյց զհոյակապ զանգատունն Նազարեթայ Հայոց եկեղեցւոյն յամին* 1734։

2. *Հօրեղբայր էր սա Յովսեփայ և Զաքարիա Բաղդամ Շահրիմանեանց որք հանգեան ի Տէր յամին* 1763 *և* 1764 *և ամփոփեցան ի նմին եկեղեցւոջ։* (*Տես թիւս* 9 *և* 10)։

3. *Փոքր թիւ Ջուղայի, սկսաւ յամին* 1615, *որով թուական տապանագրիս* (166) *լինի* 1781։